



# AUA Հայաստանի Ամերիկյան Համալսարան

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար  
պարոն Արսեն Թորոսյանին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան Սիմոն  
Գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի  
գործարարության բակալավրի ծրագրի ղեկավար  
համակից պրոֆեսոր Քնար Խաչատրյանից

«2» փետրվարի, 2021 թ.

## Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թորոսյան

Համաձայն ՀՀ սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել ՀՀ բոլոր մարզերի մարզպետարաններում 2010 թվականից մինչև 2015 թվականը հետևյալ հաստիքները զբաղեցրած պաշտոնյաների կենդանագրությունները, մարզպետ, մարզպետի տեղակալ, մարզպետի խորհրդական (առաջին և երկրորդ), գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ: Տեղեկությունը խնդրում եմ տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ հետևյալ հասցեով. [kkhachatryan@aua.am](mailto:kkhachatryan@aua.am):

Ցանկանում եմ տեղեկացնել, որ վերոհիշյալ տեղեկությունների անհրաժեշտությունը բխում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) գիտնականների՝ համակից պրոֆեսոր Ալեքսանդր Գրիգորյանի և իմ՝ համակից պրոֆեսոր Քնար Խաչատրյանի կողմից իրականացվող հետազոտության պահանջից: Հետազոտությունը ուսումնասիրում է Հայաստանի բոլոր մարզերում գյուղատնտեսական զարգացման ծրագրերում ներգրավված պաշտոնատար անձանց կրթական և մասնագիտական ուղին: Տվյալ տեղեկությունները կնպաստեն Հայաստանի մարզերում գյուղատնտեսական և արդյունաբերական ոլորտների զարգացման ուսումնասիրությանը:

Հարկ եմ համարում նշել, որ 2019 թվականի դեկտեմբերին մենք կրկին դիմել էինք նմանատիպ հարցումով՝ խնդրելով տրամադրել մեզ վերոնշյալ տեղեկատվությունը սկսած 2016 թվականից: Մեր հարցումին ի պատասխան մեզ տրամադրվել էր հայցվող տեղեկատվությունը: Սակայն տվյալների վերլուծության փուլում պարզ դարձավ, որ անհրաժեշտ է ավելացնել ուսումնասիրվող ժամանակահատվածը՝ ներառելով 2010-2015 թվականները ևս: Ուստի կրկին հայցում ենք Ձեր աջակցությունը տվյալ ծրագրի շրջանակներում:


«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 40 շենք  
+374 60 69 40 40 | +374 10 32 40 40

Քաղկեդոնիա 94607, Օքլենդ, Բրոդվեյ 1000, Սյուիթ 280  
+1 510 925 4282


[info@aua.am](mailto:info@aua.am) | [www.aua.am](http://www.aua.am)

Տարածված ամերիկյան համալսարանի հավաստագրված է՝ WASC Senior College and University Commission) կողմից՝ 985 Atlantic Avenue, #100, Alameda, CA 94501, 510.748.9001:



Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11), և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումս:

Կանխավ շնորհակալ եմ՝



Քնար Խաչատրյան

Գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի  
գործարարության բակալավրի ծրագրի ղեկավար  
համակից պրոֆեսոր

